



Դ. ԿԻՐԱԿԻ ՅԻՄՆԱԿԱՑ

ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Բան, եւ անմահ՝ Էութեամբ, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստոս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Յօր եւ Յօգևոյն հետ փրկել՝ մեզ:



ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԴԿ

Որ անբաւ յաղթական զօրութեամբ Թագաւոր ես երկնքի ու երկրի, Քրիստոս Աստուած, կ'օրհնաբանենք քեզ:

Որ Յօր փառակից ըլլալով՝ օրհնուած ես անմահներէն եւ խոնարհելով մարմին առիր, Քրիստոս Աստուած, կ'օրհնաբանենք քեզ:

Որ մեծ զօրութեամբ մահը ոտնակոխ ըրիր եւ յարութիւն առնելով՝ լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին, անմահ Էութիւն, կ'օրհնաբանենք քեզ:

ՄԵՍԵԴԻ (Սաղմոս 64, 2 եւ 3)

Աստուած՝ իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր եակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԸՆԾԱՅԱԿԱՆ

Պօղոս առաքելին թեսաղոնիկեցիներուն ուղղած երկրորդ թուղթեն (2 Թես 1, 1-12)

Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու Եկեղեցիին, որ է Աստուծոյ՝ մեր Զօր եւ մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի մէջ: Աստուծոյ մեր Զօր եւ Տեր Յիսուս Բրիստոսի կողմէ ձեզի շնորհք եւ խաղաղութիւն:

Պարտական ենք միշտ գոհութիւն մատուցանել Աստուծոյ ձեզի համար, եղբայրներ, եւ ասիկա արդար է, որովհետեւ ձեր հաւատքը յառաջդիմութեան մէջ է եւ ձեզմէ իրաքանչիւրին սերը իրարու հանդէպ կ'աճի բոլորիդ մէջ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ, հպարտ ենք ձեզմով, ձեր համբերութեան եւ ձեր հաւատքին համար հալածանքներու եւ նեղութիւններու մէջ, զորս կը կրէք: Ասով իսկ կը յայտնուի Աստուծոյ արդար դատաստանը եւ դուք արժանի պիտի համարուիք Աստուծոյ Արքայութեան, որուն համար կը չարչարիք: Աստուծոյ արդարութեամբ, չարչարանք պիտի փոխադարձուի անոնց, որոնք ձեզ կը չարչարեն, իսկ ձեզի, տառապելիներով՝ պիտի տրուի հանգիստ մեզի հետ,

երբ Տեր Յիսուս յայտնուի երկինքի մէջ իր գօրութեան հրեշտակներով, հրավառ բոցին մէջ եւ վրեժ առնէ անոնցմէ, որոնք Աստուած չեն ճանչնար եւ չեն հնազանդիր մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի Աւետարանին: Ասոնք պիտի պատժուին յաւիտեական կորուստով, պիտի մերժուին Տիրոջ երեսէն, Անոր գօրութեան փառքէն, երբ գայ փառաւորուելու իր սուրբերուն մէջ, հռչակուելու բոլոր հաւատացեալներուն մէջ. եւ դուք հաւատացիք մեր վկայութեան: Այսպէս պիտի ըլլայ այն օրը:

Այս մտածումով, մենք ստեպ կ'աղօթենք ձեզի համար, որպէսզի մեր Աստուածը արժանի ընէ ձեզ իր կոչումին, մինչեւ որ իր բարութեամբ լրացնէ իր կամքին հաճութիւնը եւ իր գօրութեամբ՝ ձեր հաւատքին գործերը, որպէսզի փառաւորի մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի անունը ձեր մէջ, եւ դուք՝ անոր մէջ, մեր Աստուծոյ եւ մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի շնորհքին համաձայն:

Ալէլուիա, Ալէլուիա,

Աստուած հազիւ յայտնուի՝ իր բոլոր թշնամիներն ալ պիտի ցրուին, զինքը ատողները՝ ամենքն ալ իր առջեւէն պիտի փախչին:

(Սաղմոս 67, 2)

Ալէլուիա:

ԱԲԵՏԱՐԱՆ ՅՐԱԷՐ ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ (Ղուկ 14, 12-24)

Մեր Տեր Յիսուս Բրիստոս ըսաւ զինք իրաւիրողին. «Երբ ճաշ կամ ընթրիք տաս, մի՛ հրաւիրեր ո՛չ բարեկամներդ, ո՛չ եղբայրներդ, ո՛չ ազգականներդ, ո՛չ ալ հարուստ դրացիներդ, որպէսզի փոխարեն անոնք ալ քեզ չհրաւիրեն եւ հատուցում ըլլայ քեզի: Ընդհակառակն, երբ ինչոյք սարքես, հրաւիրէ աղքատները, հաշմանդամները, կա-

ղերը, կոյրերը եւ երջանիկ պիտի ըլլաս, որովհետեւ անկարող են քեզի փոխադարձելու եւ փոխարենը քեզի պիտի տրուի արդարներու յարութեան օրը»:

Այս խօսքերը լսելով՝ բազմականներէն մէկը ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր, որ ճաշ պիտի ուտէ Աստուծոյ Արքայութեան մէջ»: Յիսուս պատասխանեց. «Մարդ մը

մեծ խնջոյք պատրաստեց եւ բազմաթիւ մարդիկ հրաւիրեց: Ընթրիքի պահուն, մարդ դրկեց, ըսելու հրաւիրեալներուն. «Եկէ՛ք, ամէն բան պատրաստ է»: Բոլորն ալ սկսան հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Դաշտ մը գնեցի, պէտք է երթամ տեսնեմ. խնդրեմ, նկատի մի՛ առնէր զիս»: Ուրիշ մը ըսաւ. «Յինգ լուծ եգներ գնեցի, կ'երթամ գանոնք փորձելու. խնդրեմ, հրաժարած համարէ զիս»: Ուրիշ մըն ալ ըսաւ. «Ամուսնացայ, չեմ կրնար գալ»: Վերադարձին՝ սպասաւորը այս պատասխանները հա-

ղորդեց տիրոջ: Չայրացաւ տանտերը եւ սպասաւորին ըսաւ. «Գնա՛ քաղաքին հրապարակներն ու փողոցները եւ բեր աղքատները, հաշմանդամները, կոյրերն ու կաղերը»: Յետոյ սպասաւորը դարձեալ եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, հրամաններդ կատարուեցան, սակայն տակաւին տեղ կայ»: Տերը ըսաւ սպասաւորին. «Գնա՛՝ ճամբաներն ու պարտեզները, ստիպէ որ մարդիկ գան, որպէսզի տունս լեցուի»: Որովհետեւ, կ'ըսեմ ձեզի, նախապէս հրաւիրեալներէն եւ ո՛չ մէկը պիտի ճաշակէ իմ ընթրիքէս:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Լսեցէք, թէ ի՞նչ կ'ըսէ Սուրբ Յոզիան

Այսօրուան Աւետարանը կը սկսի ըսելով. «Սուրբ Յոզիան կ'ունուցանէ այն ժամին այն՝ ինչ դուք պէտք է ըսէք»: Բայց ո՞ր ժամի մասին է որ ան կը խօսի: Ան կը խօսի փորձութեան ժամի մասին, այն ժամին, երբ մենք չենք կրնար պաշտպանել մեր հաւատքը, այն ժամին, երբ մենք չենք գիտեր, թէ ի՞նչ պէտք է ընենք, եւ ի՞նչ պիտի սորվեցնէ մեզի. երբ մենք չենք կրնար լաւ մտածել, երբ մենք չենք կրնար լաւ խօսիլ եւ աշխատիլ:

Ս. Յովհաննէս Աւետարանիչը կ'ըսէ (14: 16-17). «Ես ալ պիտի թախանձեմ Յօրը, եւ ուրիշ Միսիթարիչ մը պիտի տայ ձեզի, որպէսզի յաւիտեան բնակի ձեզի հետ. (17) Ճշմարտութեան Յոզիան, որ այս աշխարհը չի կրնար ընդունիլ, որովհետեւ չի տեսներ զայն ու չի ճանչնար զայն. բայց դուք կը ճանչնաք զայն, որովհետեւ կը բնակի ձեր քով եւ պիտի ըլլայ ձեր մէջ»: Ուրեմն, Սուրբ Յոզիան մեզի հետ է եւ մեր մէջ կը բնակի եւ այնտեղ կը մնայ յաւիտեան, պայմանով, որ մենք ընդունինք զայն՝ գիտնալով հանդերձ որ մենք չենք կրնար տեսնել զինք, բայց կրնանք զայն զգալ՝ եթէ մենք իրապէս կը հաւատանք իր գոյութեան: Ուրեմն, Ս. Յոզիան պարտականութիւնն է կրթել, յիշեցնել եւ յաղթահարել որպէսզի հասնիք երկնային արքայութեան:

Իսկ այն առակը, որ Յիսուս կու տայ

մեզի, ազահուրթեան, կեանքի վայելքի, հարստութեամբ պարծենալու եւ աշխարհիկ կեանքի անձնատուր ըլլալու մասին, ճանապարհը կը հարթէ Սուրբ Յոզիան ընդառաջ, ճանապարհը ապագային գործելու հաւատացեալին կեանքին մէջ, որպէսզի անոր յիշեցնէ Յիսուսի խօսքերը, այսինքն, երբ ընչաքաղցութիւնն ու ազահուրթիւնը մտնէ մարդուն հոգւոյն մէջ, այն ժամանակ Ս. Յոզիան կը սկսի անոր յիշեցնել, որ Յիսուս ըսած է " զգոյշ եղէք, եւ խուսափեցէք ազահուրթեան »: Ապա Ս. Յոզիան անոր կը սորվեցնէ, որ ընչաքաղցութիւնն ու ազահուրթիւնը զոյգ հիւանդութիւններ են որոնք ուրիշները քանդումի կ'առաջնորդեն եւ անիրաւ կերպով անոնց ունեցուածքը կը խլեն, միայն անոր համար որ ընչաքաղցը կ'ուզէ տիրանալ ինչքերու որոնք իրը չեն, ինչ որ Աստուած չընդունիր: Եւ երբ մարդը սկսի աշխարհիկ կեանքը վայելել, այն ժամանակ Ս. Յոզիան կը սկսի անոր յիշեցնել Յիսուսի այն խօսքը եւ առածը որ ըսած է հարուստին եւ աղքատին մասին, թէ ինչպէս աղքատը երկիւք համբարձաւ, եւ հարուստը դժոխք իջաւ (Ղկս 16: 19-31), եւ մեզի կը սորվեցնէ եւ կը խրախուսէ մեզ, որ մենք աղքատներուն եւ կարիքաւորներուն հետ կիսենք բարիքները, որովհետեւ ինչ որ մեզի կը պատկանի, մերը չէ, այլ Աստուծոյ կողմէ

տրուած բարիք մըն է:

Հարստութեամբ հպարտանալը հիւանդութիւնն է և դժբախտութիւնն է, քանի որ ան մարդը կ'առաջնորդէ հպարտութեան ու սնապարծութեան եւ իր փողին ու հարստութիւններուն միջոցաւ ուրիշներուն կը ստիպէ խոնարհիլ իր քմայքներուն ընդառաջ եւ անոնց վրայ կ'իշխէ ամանց մտածելու, թէ ինչքա՛ն ողբերգութիւնն է ցաւ կը պատճառէ ուրիշներուն երբ իր երակներուն մէջ կը հոսի այն զգացումը, որ ինք «Ամենակարող Աստուած է, եւ մինչէն իսկ կրնայ երկարել իր կեանքը»: Այն ժամանակ Ս. Հոգին կու գայ իրեն յիշեցնելու եւ սորվեցնելու, որ պէտք է հպարտ ըլլայ որ ինք հաւատացեալ է եւ հնազանդ Տէր Յիսուսի խօսքին, եւ որ որքան հարուստներ ու դրամասեր մարդիկ եկած են դարերու ընթացքին, եւ սակայն բոլորը մեռած եւ թաղուած են, եւ իրենց հարստութիւնները ոչ մէկ օգուտ ունեցած են իրենց: Իսկ անոնք որոնք աշխարհիկ կեանքի մէջ թաթխուած են, անոնց կը յարմարի անառակ որդիին առակը, զոր իրենց կը յիշեցնէ Ս. Հոգին (Ղուկաս 15: 11-32).- Անոնք, որոնք նախընտրեցին աշխարհիկ կեանքը եւ հեռացան Հօր Աստուծոյ տունէն, խաւարի իշխանութեան ու քմահաճութեան զոհ ինկան, եւ անոնց կը

սորվեցնէ չվախնալ վերադառնալէ Հօր Աստուծոյ ծոցը, որ միշտ իրենց կը սպասէ:

Աստուած, այն Աստուածն է, որ հոգատարութեամբ կը նայի մեր պզտիկ կամ մեծ բազմատեսակ հարցերուն, Այն որ ուղարկեց Սուրբ Հոգին որպէսզի ապրի եւ ըլլայ մեր մէջ, որպէսզի որբ չմնանք Զրիստոսի երկինք համբարնալէն ետք: Հետեւաբար, արժանի չէ՞ որ փոխադարձե՛նք այն սիրոյն, որմով Ան կը սիրէ մեզ, եւ շնորհակալութիւն յայտնենք Անոր ամէն ինչի համար, որովհետեւ Ի՛նքն է Ամենակարող Աստուածը:

Վերջապէս, Սուրբ Հոգին մեզի միշտ կը յիշեցնէ Յիսուսի խօսքերը. «Ա՛յդպէս ալ, կը յայտարարեմ ձեզի, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն ամբէլ մէ՛կ մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ»:» (Ղուկաս 15.10): Ամենակարեւոր հարցումը կը մնայ հետեւեալը.- Մարդ որքան կ'արձագանգէ Աստուծոյ սիրոյն, եւ կը հաւատայ Զրիստոսին, կը լսէ Սուրբ Հոգիին ու կը սորվի Անկէ:

Հուսկ, կը փակեմ, խնդրելով Ս. Կոյս Մարիամէն, որ մեր միտքը բանայ՝ Աստուծոյ անսահման սէրը հասկնալու, Յիսուսի կենսունակ խօսքը լսելու եւ գիտակցելու Ս. Հոգիին մեր մէջ կատարած աշխատանքին: Ամէն:



Կազմակերպութեամբ՝
Հ.Կ.Ա. Պատանեկան Զալքա Մասնաճիւղի
ԿԱՂԱՆԳ ՊԱՊՈՒԿ

Մասնակցութեամբ՝ «ՕՐՕՐԻԿ» խումբին
Հայ փոքրիկներու համար մշակուած եւ նոր յայտագիրներով

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Դեկտեմբեր 2017-ին, կ.ե. ժամը 3:30-էն - 5:00,
Ս. Խաչ եկեղեցւոյ «Պետողլեան» սրահէն ներս, Զալքա:

Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 70-730 283 թիւին:

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org